ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք. Վայք 01/03/2016թ.

Օրակարգում:

1. Համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման մասին
   /զեկուցող Նատալյա Հովհաննիսյան/
2. Համայնքի ղեկավարի 2015թ. կատարված աշխատանքների մասին
   /զեկուցող Գագիկ Մուշկամբարյան/
3. 2016 թվականի կատարվելիք աշխատանքների մասին
   /զեկուցող Արագած Սաղաթելյան/

1. 2015թ. վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 8205 500 դրամ, ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդը՝ 1 157 300 դրամ:

2015թ-ի բյուջեի եկամուտների կատարողականը կազմել է՝ վարչական բյուջեի պլանային մասով -148 մլն. դրամ , փաստացի կատարվել է -146 426 9 00 դրամ , որը տարվա պլանի նկատմամբ կազմել է 98.9 %:

2015թ-ի բյուջեի ծախսերը կազմել է՝ պլանային մասով 156 205.500 դրամ , փաստացի կատարվել է -147 782.700 դրամ , որը կազմում է պլանի 94.6% :

Ներկայացվում է Վայք համայնքի 2015թ. բյուջեն՝ ըստ եկամտատեսակների պլանային և փաստացի ցուցանիշներով:

N		Եկամուտների անվանումը	Տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան 4-րդ եռամսյակ			
			պլան	պլան	Փաստ	Կատարման %	կատարմ.% տար.պլանի
			հազ.դրամ				
I		Վարչական բյուջե ընդամենը	148000,1	148000,1	146426,9	98,9	98,9
1		Ընդամենը հարկային եկամուտներ	20 800,0	20 800,0	21 105,4	101,5	101,5
	1,1	Գույքահարկ	20 000,00	20000,0	20252,4	101,3	101,3
	1,2	Հողի հարկի և գույքահարկի տույժ և տուգանք	800,00	800,0	853,0	106,6	106,6
	1,3	Եկամտահարկից մասհանումներ					
	1,4	Շահութահարկից մասհանումներ					
	1,5	Բնապահպանական վճարներից մասհանումներ					
	1,6	Հողի հարկի և գույքահարկի տույժ և տուգանք					
2		Ընդամենը տեղական տուրքեր (թույլտվության համար)	3725,0	3725,0	3850,2	103,4	103,4
	2,1	Նոր կառուցվող օբյեկտների շինարարություն	200,0	200,0	130,0	65,0	65,0
	2,2	Օբյեկտները վերակառուցելու,	0,0				

		տեսքը փոփ. աշխատանքներ					
	2,3	Օբյեկտները քանդելու աշխատանքներ	0,0				
	2	Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառք	1224,0	1224,0	1182,0	96,6	96,6
	ա	հիմնական շինությունների ներսում	1224,0	1224,0	1182,0	96,6	96,6
	բ	ոչ հիմնական շինությունների ներսում					
	3	Բացօթյա վաճառք կազմակերպելու	1505,0	1505,0	1655,7	110,0	110,0
	ա	Գազ և վառելիքաքսայուղային նյութեր	1505,0	1505,0	1655,7	110,0	110,0
	բ	գյուղմթերքներ, յուրաքանչյուր օրվա համար					
	գ	այլ ապրանքներ (այդ թվում՝ ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանք)					
	2,6	Ժամը 24.00 ից հետո աշխատելու					
	ա	Խաղատներ					
	բ	շահումներով խաղերի կազմակերպման օբյեկտներ					
	գ	բաղնիքներ (սաունաներ)					
	դ	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներ					
	3	Արտաքին գովազդ տեղադրելու	700,0	700,0	792,5	113,2	113,2
	ա	ծխախոտի արտադրանք գովազդող					
	բ	այլ արտաքին գովազդ	700,0	700,0	792,5	113,2	113,2
	3	Օրենքով սահմանված այլ տեղական տուրքեր	96,0	96,0	90,0	93,8	93,8
3		ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական տուրք	2400,0	2400,0	1440,0	60,0	60,0
4		Ոչ հարկային եկամուտներ	9857,7	9857,7	8813,9	89,4	89,4
	4,1	Համայնքի սեփ.համարվող հողերի վարձակալության վարձավճար.	1300,0	1300,0	1327,4	102,1	102,1
	4,2	Գյուղատնտեսական հողերի վարձակալության վարձավ.					
	4,3	Տեղական ինքնակառավարման մարմինների գույքի վարձակալութ.	1550,0	1550,0	1449,8	93,5	93,5
	4,4	Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից	200,0	200,0	200,0	100,0	100,0
	4,5	Տեղական վճարներ	1100,0	1100,0	373,5	34,0	34,0
	4,6	Պետական բյուջեից պատվիրակված լիազորությունների համար հատկացումներ	5342,9	5342,9	5342,9	100	100,0
	4,7	Այլ ոչ հարկային եկամուտներ	364,8	364,8	120,3	33,0	33,0
5		Պաշտոնական տրանսֆերտներ ՝ հատկացումներ	111217,4	111217,4	111217,4	100	100,0
	5,1	Պետական բյուջեից դոտացիա	92872,3	92872,3	92872,3	100	100,0
	5	ՀՀ պետ բյուջեից ընթացիկ ծախսերի ֆին. նպատակով հատկացումներ՝ սուբվենցիա	18345,1	18345,1	18345,1	100	100,0
	5,2	ՀՀ պետ բյուջեից ընթացիկ ծախսերի ֆին. նպատակով հատկացումներ՝ սուբվենցիա	0,0				
	5	այլ աղբյուրներից տրանսֆերտներ					
2		Ֆոնդային բյուջե	140905,0	140905,0	140696,6	99,8521	99,9
	1	Հողի օտարումից եկամուտներ	2842,7	2842,7	3833,1	134,84	134,8
	1,1	Համայնքի սեփականությունը	2157,3	2157,3	958,5	44,4305	44,4

		համարվող գույքի օտարումից					
	1	ՀՀ պետ բյուջեից կապիտալ ծախսերի ֆին. նպատակով հատկացումներ՝ սուբվենցիա	135905,0	135905,0	135905,0	100	100,0
	1,2	Վարչական բյուջեից (պահուստային ֆոնդից) կատարվող հատկացումներ					
		Տարեսկզբի ազատ մնացորդ /ֆոնդային բյուջե/	1157,3		1157,3		
3		Տարեսկզբի ազատ մնացորդ	8205,5		8205,5		
4		Ընդամենը եկամուտներ	288905,1	288905,1	287123,5	99,3833	99,4

2015թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

N		Ծախսերի անվանումը	Տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան տարի			
			պլան	պլան	Փաստ	Կատար	կատարմ.%
ԽՈՒՄԲԸ	ենթախումբը		հազ.դրամ			ման %	տար.պլանի նկ.
1		Վարչական բյուջե ընդամենը	156205,5	156205,5	147782,7	94,6	94,6
1		Տեղական ինքնակառավարում	64380,5	64380,5	56330,3	87,5	87,5
2		Պաշտպանություն					
3		Հասարակական կարգի պահպանություն					
4		Կրթություն և գիտություն	49955,0	49955,0	49955,0	100,0	100,0
5		Առողջապահություն					
6		Սոցիալական ապահովություն և ապահովագրություն	1000,0	1000,0	1000,0	100,0	100,0
7		Մշակույթ, սպորտ	32690,0	32690,0	32464,0	99,3	99,3
8		Բնակկոմունալ տնտեսություն					
	7,1	Ճանապարհների վերանորոգում					
	7,2	Սան մաքրում	7200,0	7200,0	7200,0	100,0	100,0
	7,3	Կանաչապատում					
	7,5	Հարազատներ չունեցող մարդկանց թաղում					
	7,6	Ջրային կառույցների շահագործում					
	7,7	Այլ ծրագրեր					
8		Կոմունալ ծառայություն /փողոցների լուսավորում/					

9		Գյուղատնտեսություն	835,0	835,0	833,4	99,8	99,8
10		հանքային հանածոներ					
12		Պահուստային ֆոնդ	145,0	145,0		0,0	0,0
13		Այլ ծախսեր					
14		Հիմնական խմբին չդասվող ծախսեր					
2		Ֆոնդային բյուջե	137062,4	137062,4	23552,3	17,2	17,2
	1	Կապիտալ շինարարություն, սարքավորումներ	137062,4	137062,4	23552,3	17,2	17,2
	2	Կապիտալ վերանորոգում					
	4	Վարկերի և այլ փոխառությունների մարում					
	5	Պահուստների ձևավորում					
3		Ընդամենը ծախսեր՝	293267,9	293267,9	171335,0	58,4	58,4

ՍԵՓԱԿԱՆ եկամուտները *վարչական բյուջեի պլանային ցուցանիշում կազմում են 34.382.700 դրամ, որոնք կատարվել են 33.817.500 դրամ ով կամ 98.4 %-ով:*

Սեփական եկամուտները ընդհանուր եկամուտներում կազմում են 24.6 %:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ կազմել է 140.905.000 դրամ , որից 120.000 .000 դրամը տրամադրվել է Վայոց ձորի մարզպետարանի կողմից ՝համաձայն ՀՀ կառավարության որոշման՝Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայքի ,,Արևիկ,, մարզադաշտի հիմնանորոգման նպատակով /յուրաքանչյուրին 60 մլն դրամ/: Նշված ծրագրերն ընթացքի մեջ են, կատարվել են նախագծման աշխատանքները, կնքվել է պայմանագիր կապալառուի հետ: Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել մինչև 2016թ. Հուլիսի 1-ը:

Վայք քաղաքային համայնքի և ,,ՀԱԲԻԹԱԹ ՖՈՐ ՀՅՈՒՄԵՆԻԹԻ ԱՐՄԵՆԻԱ,, հիմնադրամի միջև 2014 թ. դեկտեմբերի 18-ին կնքված դրամաշնորհհային պայմանագրի համաձայն ..Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք քաղաքում ՝՝ծրագրի համաֆինանսավորման նպատակով ՀՀ Կառավարության որոշման համաձայն Վայոց ձորի մարզպետարանի կողմից Վայք համայնքին տրամադրվել է 13 341 000 դրամ, որը փոխանցվել է հիմնադրամին՝որպես Վայք համայնքի 2015թ. համաֆինանսավորման գումար:

Վայոց ձորի մարզպետարանը ՀՀ կառավարության որոշմամբ Վայք համայնքի թիվ 1 և թիվ 3 մանկապարտեզներին հատկացրել է 2 564 հազ. Դրամ՝խոհանոցի և սանհանգույցների գույքի ձեռքբերման նպատակով, որից թիվ 1 մանկապարտեզին՝646 հազ. Դրամ, թիվ 3 մանկապարտեզին՝1 918 հազ. Դրամ:

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

Վայք համայնքի 2015թ. բյուջեի ծախսային մասի պլանը կազմել է 298 267 900 դրամ, որից.

Վարչական բյուջե – 156 205 500 դրամ, փաստացի կատարվել է 147 782 700 դրամ

Ֆոնդային բյուջե- 142 062 400 դրամ, փաստացի կատարվել է 23 552 300 դրամ:

Համայնքի բյուջեի ծախսային մասի գերակշիռ մասը կազմել է աշխատավարձը : Այն 2015թ. կազմել է փաստացի 135 933 հազ. Դրամ: Մնացած մասը կազմում են քաղաքապետարանի, ենթակա 9 ՀՈԱԿ-ների պահպանության և քաղաքային լուսավորության ծախսերը:

2015թ. Դեկտեմբեր ամսին Վայքի քաղաքպետի կարգադրությամբ քաղաքապետարանում և ենթակա 9 կառույցներում կատարվել է գույքագրում, որի արդյունքում քաղաքապետարան են ներկայացվել նշված կազմակերպությունների հիմնական միջոցների և պաշարների ցանկերը ՝ սկզբնական արժեքով, իսկ հաշվեկռում՝ հաշվեկշռային արժեքով:

2015թ բյուջեի տարեվերջի մնացորդը կազմել է.

Վարչական մասում- 6 849 669 դրամ

Ֆոնդային մասում- 118 301 665 դրամ:

Տարեվերջյան մնացորդը տեղափոխվել է 2016թ. բյուջե:

2016թ. Վայք համայնքի ընդհանուր բյուջեն կազմում է 277.787.200 դրամ:

2016թ. բյուջեի եկամտային մասը կազմել է ընդամենը 152 635 866 դրամ , / վարչական- 147 727 հազ., ֆոնդային- 4908 966 դրամ/:

2. ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարը վարել է թվով 9 ավագանու նիստեր, որից 6-ը արտահերթ, իսկ 3-ը հերթական. որտեղ կայացվել է 45 որոշումներ:
Ընդունել է 73 որոշումներ, արձակել 70 կարգադրություններ

1. Համայնքի ղեկավարը կատարել է քաղաքացիների ամենօրյա ընդունելություն, քաղաքացիների կողմից հաշվետու ժամանակաշրջանում ստացվել են թվով 712 դիմումներ որից 659-ը տեղեկանքներ տրամադրելու, 29-ը ֆինանսական օգնության, 3-ը հողհատկացման, 4-ը շինարարության թույլտվության, 3-ը շահագործման փաստագրման ակտ տրամադրելու, 1-ը խնամակալության, 1-ը արխիվից փաստաթղթերի տրամադրման, 12-ը հասցեավորման կամ վերահասցեավորման:

2. ԹՎՈՎ 29 ընտանիքների տրամադրվել է ֆինանսական օգնություն

3. ՀԱՄՔԵ միության միջոցներով <<Տաք ձմեռ>> ծրագրի շրջանակներում համայնքի թվով 12 ընտանիքների տրամադրվել է ֆինանսական օգնություն՝ էլ. էներգիայի կամ գազի արժեք, 10 ընտանիքների տրամադրվել է սնունդ,

4. Մասնակցել է Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Վայքի բաժնի կողմից կազմակերպված հանրային քննարկումներին, համայնքային ոստիկանների ամենամսյա հաշվետվություններին:

5. Տրամադրվել է 17 Ճարտարապետահատակագծային առաջադրանք , 9 շինարարության թույլտվություն, 3 շահագործման փաստագրման ակտ

6. Համայնքի ավագանու համաձայնությամբ օտարվել և օգտագործման է տրամադրվել 4 միավոր հողատարածքներ

7. Երթևեկության անվտանգությունը ապահովելու նպատակով կատարվել է փողոցային գծանշում

8. Առևտրի և ծառայությունների բնագավառում հատկացվել է թույլտվություններ՝
.ոգելից խմիչքի-197
.ծխախոտի վաճառքի-74
.թանկարժեք մետաղների վաճառքի-1
.հանրային սննդի կազմակերպման-10
.բացօթյա առևտրի վաճառքի-1
.հեղուկ վառելիքի, սեղմված բնական գազի-24
.տեխնիկական հեղուկների վաճառքի-9
. Արտաքին գովազդ-45

Հաշվետու ժամանակաշրջանում հիմնանորոգվել է Վայքի քաղաքային համայնքի ջրամատակարարման համակարգը

Կազմակերպվել է համայնքի զինծառայողների ծնողների այցը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ երեխաներին տեսակցելու նպատակով:

Տեղադրվել է խաչքար՝ նվիրված Մեծ Եղեռնի 100ամյակին

Ապրիլի 23- ին կազմակերպվել է ջահերով երթ՝ նվիրված 1915թ. հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին :

Համայնքի տարածքում տեղադրվել են թվով 9 փողոցային լուսատուներ

Ապրիլի 24-ին Վայքի բնակիչները սգո քայլերթով այցելել են մեծ եղեռնի զոհվածների հիշատակին նվիրված խաչքար հուշարձան՝ հարգանքի տուրք մատուցելով Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին:

Համայնքում գործում է անվճար ներքաղաքային տրանսպորտ

Հրատապ ծրագրով համայնքի տարածքում կատարվել է մոտ 2300 քառ. մետր ասֆալտապատման աշխատանքներ, տեղադրվել է 2 զրուցարան, վերանորոգվել է Շահումյան 102 շենքի հետնամասում գտնվող այգին:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վայքի տարածքային բաժնի կողմից գրանցված ակտերի ամփոփ տեղեկատվությունը 2014-2015թվականների համար

	Ծնունդ	Մահ	Ամուսնություն	Ամուսնալուծություն
2014	71	40	34	9
2015	38	41	37	6

Ենթակա կառույցների կատարած աշխատանքները՝ ամփոփ

ՎԱՅՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ
սաների թիվը 130

1. Ապրիլ ամսին մասնակցել է Գյումրիում կազմակերպված միջազգային մրցույթ փառատոնին, որտեղ վոկալ բաժնի աշակերտուհի Գայանե Ավագյանը արժանացել է 3-րդ պատվավոր մրցանակի:
2. Նույն ամսին երգչախումբը մասնակցել է Վայոց ձորյան մրցույթ-փառատոնին, որտեղ գրավել է 1-ին մրցանակային տեղը
3. Երեխաների պաշտպանության օրը արվեստի դպրոցի սաները ելույթ են ունեցել թիվ 3 մանկապարտեզում:
4. Հունիս ամսին Եղեգնաձոր քաղաքում մասնակցել են կանադահայ բարերար Վան Արմենյանի կողմից կազմակերպված փառատոնին
5. Նույն ամսին մասնակցել է մարզկենտրոնում տեղի ունեցած համերգին, որտեղ մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրավել են մեր աշակերտները
6. Կազմակերպել են տարեվերջյան հաշվետու համերգ և ցուցահանդես:

ՎԱՅՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ
սաների թիվը 86, 3 խումբ
ՎԱՅՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ
սաների թիվը 120 , 4 խումբ

Համայնքային ենթակայության մանկապարտեզներում հաշվետու ժամանակաշրջանում տեղի են ունեցել միջոցառումներ նվիրված մայրիկների տոնին, Սուրբ Զատկի տոնին, ծաղկազարդի օրվան, երեխաների պաշտպանության օրվան, ամանորին, կազմակերպվել են տարբեր տեսակի մրցույթներ, սպորտային միջոցառումներ, ինչպես նաև ավանդական տարեվերջյան հաշվետու հանդեսներ:

Երկու մանկապարտեզները մասնակցել են ՀՀ Նախագահի <<Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ>> սպորտային միջոցառմանը, որտեղ գրավել են մրցանակային տեղեր և արժանացել են դրամական պարգևների:

ՄԱՆԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մանկական ստեղծագործության կենտրոնում տեղի են ունեցել հատկյալ միջոցառումները

1. Փետրվար ամսին- տեառն ընդառաջ ,
2. Մարտին <<Անուրջներ>> պարային համույթը մասնակցել է <<Երևանյան գարուն 2015>> երգի ու պարի միջազգային փառատոնին,

3. Ապրիլին <<Անուրջներ>> պարային համույթը մասնակցել է Ծիծեռնակաբերդում կայացած Մեծ եղեռնին նվիրված քայլերթ միջոցառմանը:

4. Ապրիլին ՀՈԱԿ-ի տարածքում տեղի է ունեցել Վայոց Ձորի մարզպետարանի և քաղաքապետարանի համատեղ ուժերով կայացած հիշատակի միջոցառում՝ նվիրված Մեծ Հայրենականում տարած հաղթանակի 70 ամյակին:

5. Մայիսի 8-ին և 9-ին կազմակերպության աշխատակազմը և սաները Եղեգնաձոր քաղաքում մասնակցել են <<Մայիսյան հաղթանակներ>> տոնական միջոցառումներին:

6. Մայիսին <<Անուրջներ>> պարային համույթը մասնակցել է Երևանում կայացած <<Հաղթանակի գարուն 2015>> 7-րդ ամենամյա միջազգային փառատոնին:

7. Հունիսին մասնակցել են Վայքի քաղաքային հրապարակում տեղի ունեցած երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառմանը:

8. Հոկտեմբերին մասնակցել է Արենի գյուղում անցկացված <<Գինու ամենամյա փառատոնին>>

9. Նույն ամսին մասնակցել է <<Եղեգնաձորի բերքի տոնին>>

10. Հոկտեմբեր ամսին հյունընկալել է Դիլիջանի միջազգային դպրոցում սովորող շուրջ 12 պետությունների ներկայացուցիչների:
ինչպես նաև ամանորյա միջոցառումներ
Մանկական ստեղծագործության կենտրոնի պարի խմբերը մշտապես ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես համայնքային, այնպես էլ համայնքից դուրս կազմակերպվող միջոցառումներին

ՎԱՅՔԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ընթերցողների թիվը 1061

1. Գրադարանը Վայքում տեղակայված զորամասին նվիրել է թվով 423 միավոր գրականություն

2. գրադարանում գործում է <<Ապրիր և հիշիր>>, << Հայաստան, երկիր դրախտավայր>>, խորագրով ցուցահանդեսները

3. Կազմակերպվել է <<Քեզ համար փոքրիկ գրադարանավար>> թեմատիկ ցերեկույթ

4. Մանկապարտեզի երեխաների համար կազմակերպվել է էքսկուրսիա:

5. Գրադարանավարի օրը/հոկտեմբերի 7/ կազմակերպվել է միջոցառում, որին հրավիրվել է նաև վետերան գրադարանավարներ

ԱՐԵՎԻԿ ՄԱՐԶԱԴԱՇՏ
գործում է 4 խումբ 87 մարզիկներով

1. Մայիս ամսին- մինի ֆուտբոլի մեծահասակների առաջնություն, որին մասնակցել են 8 թիմեր

2. Մայիս ամսին-<<Լավագույն մարզական ընտանիք>> մրցաշար

3. Հունիս ամսին –մինի ֆուտբոլի դպրոցականների առաջնություն, որին մասնակցել են 8 թիմեր

4. Հոկտեմբեր ամսին զորակոչիկների և նախազորակոչիկների տարբեր սպորտաձևերից մարզային առաջնություն
5. Սեպտեմբեր ամսին-սպորտային օլիմպիադա 8 թիմերի մասնակցությամբ

ՎԱՅՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ գործում է 8 խումբ 112 մարզիկներով

1. մայիս ամսին- անցկացվել է ԽՍՀՄ հերոս Վահիկ Լևոնյանին անվան վոլեյբոլի հուշամրցաշար
2. Շախմատի խմբի երեխաները մասնակցել են բազմաթիվ մրցաշարերի, որտեղից վերադարձել են պատվավոր մրցանակներով
3. Ապրիլին անցկացվել է վոլեյբոլի փոխանցիկ գավաթի առաջնություն, ինչպես նաև սեպտեմբեր ամսին նույնպես վոլեյբոլի առաջնություն՝ նվիրված ՀՀ անկախության 23-րդ տարելիցին
4. Հաշվետու ժամանակաշրջանում կարատեի խումբը մասնակցել է տարբեր մրցույթների, որտեղ միշտ ունեցել են պատվավոր մրցանակներ
5. Սեպտեմբեր ամսին –վոլեյբոլի մրցաշար՝ նվիրված ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին

ՎԱՅՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ենթակա կառույցների կողմից իրականացվող բոլոր միջոցառումները կատարվել են մշակույթի տան աջակցությամբ

3. 2016 թվականի կատարվելիք աշխատանքներ

1. Ինտեգրված սոցիալական կենտրոնի կառուցում
2. Արևիկ մարզադաշտի և Երիտասարդական այգու վերանորոգում
3. Բազմաբնակարան թվով 18 շենքերի տանիքների փոխում Հաբիթաթ կազմակերպության միջոցով
4. Փոսային ասֆալտապատման աշխատանքներ
5. Փողոցային լուսավորություն
6. Նոր գերեզմանոցի տեղի ընտրություն և համալիր աշխատանքներ

Աշխատակազմի քարտուղար *Գ. Մուշկամբարյան*